



ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

Rev. Pere G. Kalemkarian Mechitaristengasse
№ 4 Vienna

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Ներկայ 1898 թվականի
Պուշկարիչի համար տարեկան 12 ֆրանկ
» » վեցամսեայ 6 »
Արտասահմանի » տարեկան 14 »
» » վեցամսեայ 7 »
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Համակ դրամ կապիտալի դրկի հետեւեալ հասցեով
ԽՍԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԼՐԱԳՐՈՑ ՎԱՌՆԱ (ՊՈՒՆԿԱՐԻԱ)
Редакция на вѣстникъ
„Иравункъ“
ВАРНА (България).
Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խոթագրութեան ուղղեալ գրութիւնք
եւ չեն դրկուիր եւ յարմար դասուած
ներքեւիս կը հրատարակուին անբողոք
չովիս կամ մասամբ:
Խոթագրութեան տողը 20 սանթիմ. երե-
ւոյն անկի անգամներու համար 20 0/0
գեղջ կը լինի:

ԹՈՒՐԲԻԱ

Թուրք ժողովուրդը՝ օտմանեան
բանակին թեալիւրի դաշտերուն
մէջ տարած դիւրագին յաղթա-
նակներու թարմ յիշատակովը ու
գեւորութեամբ, արիւնդութեամբ բռնա-
կալութեան տիրապետչակ խոթութե-
ան թիւները կը փառաբանէր, դեռ
երէկ, խանդավառ հիացումով:

Եւ կարմիր բռնապետութիւնը
հայկական շարքերու աղետով
յիշատակը մէկդի թողած, ուրախ
զուարթ կերպեր իր անհանգու-
թելի լուծին տակ առաւել տու-
նարհած ունենալ կրէտէն ու մինչեւ
իսկ Աթէնքի կառավարութիւնը:

Իրաւ է թէ հէյնեակն դատը
անհաղին կորուստ մը կրեց: Ա-
ղետը ա՛նքան մեծ եղաւ որ քա-
նաստան ընդ երկար դեռ կըսած
պիտի մնայ գուցէ:

Օտմանցիներու այս յաղթու-
թեամբ, Պալքանեան Ալաւ ազ-
գերութեան աշքին ալ անհաղիւ կը-
թուէր նորէն Եւրոպայի հիւսնդ
բռնապետութիւնը:

Պուլկարն ու Սերպը, որոնք
խոշոր պատառներ կը յուսան միշտ
Մակեդոնիոյ մէջ, զգացին թէ
իրենց համար անժամանակ յետա-
ձգուած է այդ բարեբաւորիկ
ժառանգութիւնը:

Աւերելոյթս ամեն ինչ այսպէս
նպաստաւոր էր ի հաշիւ թուրք
կառավարութեան որ կը պահան-
ջէր իր 1832ի սահմանադրուի-
ւները, այսինքն թեալիւրի, 250
միլիոն ֆրանք տուգանք եւ դա-
շինքներու շնորհով: Ու այս բո-
լոր պահանջներուն մէջ Սուլթա-
նը իրեն զօրավիգ կը գտնէր ինք-
նապաշտ Գերմանիոյ փառամու ու
անխիղճ կայսրը:

Տեսարանը բոլորովին փոխուած
է այսօր: Թեալիւրի կորակու-
րուր կեղծ հիմա թուրք զօրքը
որ սկսած էր հրապոյր զգալ Վալոյի
ծոցին դիւթիչ ափունքէն զոր պի-
տի գային զարգարել հարէմի դե-
ղուհիներ:

Հոգ ալ յաղթանակ տարաւ Եւ-
րոպական դիւանագիտութիւնը որ
իրը քաղաքական սկզբունք ըն-

դունած է «մահիկին իշխանութե-
ան» ազատութեամբ թիգ մը հող ան-
գամ ետ չի դարձնել կրկին»:

Ու դեռ թեալիւրի պարպու-
լուն պիտի յաջորդէ, ինչպէս կը
կարծուի հաստատապէս, Եւրոպի-
ոս իշխանին ալ կրէտէի ընդհա-
նուր կառավարիչ անուանումը:

Ըսել կըլլայ որ «Արեւելքի հի-
ւանդ մարդ»ը 30000 իսլամի կեան-
քովը եւ անհաղին գումարներու
սպառումով ձեռք ձգած փայլուն
յաղթանակէն յետոյ, չէնք շնորք
վնասով մը գործէն դուրս կեղծ,
առանց մատ մը հողի տիրանալու
եւ առանց դոնէ կրետէի մէջ իր
նախկին դիրքը կարենալ պահ-
լու:

Շիտակը, պատմութեան մէջ
ասանկ ծիծաղաշարժ յաղթանակ
արձանագրուած չէ դեռ գուցէ:

Իրերու այս հակառակն ու
տարօրինակ ընթացքին պատճա-
ռով կըստարեւել որ Բիւզանդի-
ոնի բռնապետութեան բաւարին մէջ
անտիկնիկալ խրտուսներ ու շփո-
թութիւններ առաջ գային:

Եւ անհա Պուլքէն հասած վերջին
լուրերը կը հաստատեն, թէ թիւրք
ժողովուրդին մէջ անսովոր իրար-
անցում մը կը տիրէ:

Իսլամին նուիրական աւանդու-
թիւններուն բոլորովին հակառակ
է ետ տալ զրաւուած հող մը ու
բուն վրայ օտմանցիի արընը թա-
փուած է մէկ անգամ:

Ինչ, անօթի փորով, բոպիկ
ոտքով կուրիլ, պատերազմի դաշ-
տին վրայ 1000աւոր զիպկներ
թողուլ, կեանքի գնով յաղթանակ
տանիլ, թեալիւրի տիրանալ,
ու օր մը վերջն ալ ամեն բան ետ
դարձնել, ասիկա անհասկնալի
կուգայ հիմա թուրք ամբոխին,
որ իրը թէ սկսեց է խելքը գը-
լուխը բերել քիչ մը եւ ըմբռնել,
թէ դէպի անդունդ կառաջնորդէ
զինքը՝ իր արիւնդարութեամբ, միահե-
ռան կառավարութիւնը:

Իրենց կառավարութիւնը իր
խոհական արժանիքին մէջ ճանչը-
նալը է՛ն տպաւորալից եւ է՛ն մա-
հացու զէնքն է բռնապետութեան
զէմ: Ասոր համար է որ կը հա-
ւատանք, երբ կըսեն թէ ժամա-

նակէ մը ի վեր անհոգողի մէջ է
արիւնդակ միապետութիւնը որ
սկսած է իր ստուերէն անգամ
կասկածիլ եւ ամենախիստ հակո-
ղութեան ենթարկել Պուլքայ ամ-
բող ընակչութիւնը:

Աւելորդ է ըսել անգամ թէ
այս բարբարոս հակողութեանց ե-
րեսն քանի՜ քանի անմեղ հայեր
կը նետուին դարձեալ բանտերու
տանջանքին մէջ:

Կըսուի թէ Տիգրան Արփի-
տեան ձերբակալուած է: Թիւրք
կառավարութիւնը կուգէ եղեր
զանի իբր պատանդ պահել, եւ
խստիկ կը պահանջէ որ Արփիտը
Արփիտեան վերադառնայ Պուլքայ,
ճիշդ՝ ինչպէս որ Գասպար Չերազ
երբեմն նեղեց, Մինաս Չերազ
անձնատուր ընելու ունայնամիտ
յոյսով:

Բոլոր այս խառնակութիւնները
իրենց ամենադառն հետեւանքնե-
րուն մէջ, թեթեւ յոյս մըն ալ
կուտան մեղի որ ներկայ թուրք
բռնապետութեան օրերը համու-
ած են, եթէ մանաւանդ իրապէս
թուրք ժողովուրդն ալ սկսած է
ինքնաճանաչութեան մօտենալ:

Եթէ, ըսի, որովհետեւ զըժ-
բաղդարար շատ հաւատարի չէ որ
իսլամ ժողովուրդը իր բարբա-
րոս կառավարութեան անհեթեթ
շարժումներուն դէմ զրգուով
ծայրայեղութեան տանելու չափ
կորով ու գիտակցութիւն ունենայ
տակաւին:

Սխալ է արդեօք այս կարծիքս:
Իցի՛ւ թէ . . .

ՎԱՅԱՆ ՇԱՐԻՄՅԱՆ

ԲԱՐԵԿԱՄ-ՉԱԿԱՌԱԿՈՐԴՆԵՐՈՒ

Չենք կրնար անկեղծ ցաւ մը
չի զգալ տեսնելով որ Իրաւունքի
բարեկամներու մէկ մասը կը սըրտ-
մտի, կը վշտանայ մեզ դէմ այն
միակ պատճառով որ չափաւոր ու
քաղաքավարի լեզուով կը պա-
տասխանենք մեզի դէմ եղած յար-
ձակումներուն, ու անտարբեր լը-
նութիւն մը կը պահենք սքողեալ
հարուածներու, նախատինքներու
եւ անխաղձութիւններու հանդէպ:

Ոմանք ժամանակի նորաձեւու-

թեան եւ հոսանքին տրամադա-
պէս հակառակ մեր այս ընթացքը
չկարենալով ուրիշ կերպ մեկնել,
հիմնովին սխալ եւ անտեղի են.
Թաղութիւններու կը դիմեն այս
մասին, որոնք աւելի կը զրգուն
զիրենք, եւ կը դարձնեն մեղի հա-
կառակորդ մասնաւորապէս մի-
այն այս կէտին մէջ, առանց սա-
կայն յաջողելու քանդել այն հա-
մակրութիւնը զոր ընդհանրապէս
կը զգան Իրաւունքի համար:

Ու այսպէս, կունենանք բարե-
կամ հակառակորդներու փոքրիկ
խումբ մը:

Որպէս զի այն չի մեծնայ տա-
կաւ, ինչ որ բնականաբար չպի-
տի համապատասխանէր մեր փա-
փաքին, ա՛լ անհատեւտ հարկ կը
տեսնենք, բարեկամ-հակառակորդ-
ներու այս արտակարգ երեւոյթին
հանդէպ երկար ժամանակ լուռ-
թիւն պահելէ ետքը, քանի մը
խօսքով բացատրել հրապարակով
պատճառներ մեր այն ուղղութեան,
որ անոնց կը թուի անմեկնելի,
իսկ մեզ՝ համապատասխան ժողո-
վուրդի շահերուն եւ փափագին:

Իրաւունք ոչ մէկ անձի, ոչ
մէկ շրջանակի, ոչ մէկ կուսակ-
ցութեան հետ ներքին կապ, կամ
յարաբերութիւն չունենալով, այլ
ժողովրդին դրամովը հիմնուած
ու ցարդ շարունակուած ըլլալով,
արտաքին ու է ազդեցութեան ա-
զատ եւ բոլորովին անկախ թերթ
մըն է, որ իր անկեղծ համոզում-
ներուն համաձայն միայն կը գրէ
ու կը դատէ:

Այս այնքան ճշմարիտ է որ-
քան երկու անգամ երկուքը չորս
կընէն:

Ասանկ դրութեան մը մէջ չենք
կրնար ունեցած ըլլալ եւ ոչ ունենալ
նիւթական շահերէ ծնողնկատում-
ներ որ արգելք ըլլային մեզի
յայտնի եւ սքողեալ հարուածներու
պատասխանելու ամենաբաւար-
ճով, կրակուրտ լեզուով, նախա-
տական ընտրուած բացատրութիւն-
ներով, միշտ սպասելով ամենա-
փոքր առիթ մը, ասոր անոր դէմ
լուտանքներով լեցնելու մեր սիւ-
նակները:

Այս դիւրին բան մըն էր ինք-

նին և կը դիւրացնէր մեր գործը, չարունակ մատակարարելով մեզ պատրաստ նիւթ մը գրելու: Թերթն ալ հաւանականաբար աւելի հետաքրքրական պիտի նշկատուէր այն դասակարգէն որ լրագրական կռիւէ կախորժի պարզապէս, արտասահմանի թերթերու մէկ մասին ընթերցումովը տարիներէ ի վեր կազմած ըլլալով իր գրական ճաշակը:

Մենք չենք ուզեր այդ գնով հետաքրքրական ընել իրաւունքը, որովհետեւ պէտք պիտի ըլլար մեզի, մեր համոզումներուն հակառակ շարժիլ, այդ ողբալի ճաշակը աւելի զարգացնելու ջանալով, փցուն, անիմաստ, անձնական նկատումներէ բղխած պայքարներով զարգարելով մեր էջերը և մեր անձնական կիրքերը յագեցնելու համար, ատելութեան նորանոր սերմեր ցանկնով, փոխանակ անկեղծ ու ուղղամիտ տարբերութիւն համեմատելութիւն գոյացնել ջանալու, ինչ որ կը նշկատենք հայ հրապարակագրի բարձրագոյն պարտականութիւնը, մեր արդի ողբալի վիճակին մէջ:

Մենք պարտական ենք մեզի դէմ ուղղուած անիմաստ յարձակումներու պատասխաններով որքան կարելի է քիչ զբաղեցնել ժողովուրդը, ալլապէս՝ չենք կըրնար անձնական հաշիւները հանրային գործերու հետ խառնելու անպիտան ուղղութեան դէմ գրել:

Ստիպուած ենք արհամարհոտ լռութեամբ անցնիլ անտիղի ակնարկութիւնները, որովհետեւ տաղտկացած ենք ըսի, ըսաւնեւրով լեցուն, հանրութեան համար բնաւ չահեկանութիւն չունեցող, լրագրական անծայր ու անվերջ յոգեւածներէ և քաջ գիտենք թէ ժողովուրդի մեծամասնութիւնը նոյնչափ տաղտուկ կը զգայ անոնցմէ:

Չենք կրնար չափազանցեալ յաւակնոտութեան մը դրօշմը կրող, գրական քննադատութիւններու, բուն բառովը, անամէջ խժըժանքներու կարեւորութիւն տալ, որովհետեւ անպատշաճ, անօգուտ ու անշահեկան կը նկատենք, արդի հանգամանքներու մէջ, իրաւունքի ընթերցողներուն ընծայել գրական վիճաբանութիւններ որոնք դառնան կարգ մը բանաստեղծական բացատրութեանց, լուսնին ու վարդին, հուրին և փայլին, գոյնին և չլարչին գործածութեան շուրջը:

Իրաւունք օրինական տեսակէտով, մասնաւորներու սեփականութիւն է, ինչպէս գրիթէ ամէն թերթ. բարոյապէս, սակայն, նուիրական պարտականութիւն մը կայ մեր վրայ, մասնաւորներու շահերուն գործիք չի դարձնել և որքան կարելի է անձնականութիւն հոտող վէճերէ հեռի պահել զայն, եթէ մինչեւ իսկ անոր խմբագրներու անձերուն վերաբերի խըն-

դիրը, ինչպէս պատահած է արդէն:

Մենք պարզապէս ապօրդիւն, հանրամիտ կը նկատենք այն վէճերը, որոնց մասնակցողներուն քով ուղղամտութիւնը կը պահի: Պայքարը պայքարի համար մեղ, հանրային շահերու պաշտպանութեան պատրուակին տակ ծածկուած և իսկապէս անկէ տարբեր գիտումներու համար գրիչ շարժիլ, ժողովուրդը մուրհիցնելու ճգնիլ, անուղղամտութեամբ, վրան բաց կեղծիքներով, լրագրական անաղնուութիւններով ժողովուրդի բարքին վրայ յուռի կերպով ազդել մեր գործը չէ:

8-10 տարուան փորձառութիւնը ակնհերեւ ցոյց չտուաւ արդէն թէ ի՞նչ արդիւնքներու կը յանգին կրթոտ, անաղնիւ, գիտակիտակ մղուած լրագրական պայքարները:

Տուէք մեզի ուղղամիտ հակառակորդներ, ու այն ատեն հոգիով, մարմնով նետուինք գաղափարի աղնիւ պայքարին մէջ:

Յարգաւոր պիտի սեպենք ինքզինքնիս, եթէ այս բացատրութիւնները կարենան ձեզ րիչ թէ շատ զոհացնել, Սիրելի բարեկամ-հակառակորդներ:

Յարենք այս առիթով թէ մենք չենք անոնցմէ որոնք քաղաքակիրթ ազգերու օրինակը իբր փաստ իրենց ձեռքը բռնած, կուտակցական պայքարներու մէջ միայն կը տեսնեն զարգացումը, յաւելցիմութիւնը և ուրիշ չեմ գիտեր ինչ սքանչելի բաներ, առանց նշկատողութեան առհիւր միջավայրի, զարգացումի, վարչական դրութեան, տնտեսական վիճակի և ուրիշ հաղարումէկ հանգամանքներու անհուն տարբերութիւնը որ կայ մեր և Եւրոպայի միջև:

Մեր հաստատ համոզումը այն է թէ ժողովուրդի միակ չէ՛հն ու միակ փափաքն է չինիչ, իսկապէս առաջնորդող, աղնիւ գաղափարներով տոգորող, համեմատելութեան և ինքնաճանաչութեան ոգիին զարկ տուող գրութիւններ կարգաւ, գործնական կեանքի համար կարեւոր և օգտակար նիւթեր տեսնել, ընթերցողին հայեացքները լայնցնող, իրեն մտային հորիզոնը ընդարձակող յոգեւածներ գտնել մասնաւոր մէջ, որոնց ներկայացուցիչները այդ ասպարէզին մէջ մրցելու են իրարու դէմ և ոչ անձնական և կուտակցական կռիւներու և նախադիմաբանութեան ժխոր յարուցանելու մէջ:

Մեր սկզբունքներուն և կարծիքներուն հակառակորդներ շատ կան ու պիտի ըլլան միշտ. գիտենք. սակայն մենք մեր կողմնունինք ժողովուրդին անկեղծ ու լուրջ մասին. համակրութիւնը, մաքուր խղճի մը անդորրութիւնը

և մեր ուղղամտութեան վճիռ գիտակցութիւնը որոնք կը բաւեն մեզի իբր բարոյական նեցուկ և միտքարութիւն և զորս փափու գիւլի էր որ ամեն հրապարակագիր ունենար մեզի չափ:

Ուռուցիկ ինքնազոյութիւն չէ այս, այլ իրողութիւն, զորս շատեր արդէն առիթ ունեցած են ստուգելու:

Ճակատաբայ կրնանք յայտարարել, այո՛, թէ իրաւունքի մեծագոյն արժանիքը փնտռած ենք միշտ ուղղամտութեան ու անկողմնակալութեան մէջ:

ՀԱՅԵՐ ԵՒ ՌՈՒՄԱՆԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ

Պուրէշի Տրեքաք անուն թերթին 711 թիւին մէջ կը կարդանք հետեւեալը. «Սթուրգաի մէկ նոր անմտութիւնը» խորագրին ներքեւ:

«Աշխարհի բոլոր մասերուն մէջ գտնուող ամեն հայոց հոգեւոր պետին՝ էջմիածնայ Կաթողիկոսին կողմէ զորկուած մի նուիրակ վարդապետ՝ որ պաշտօն ունէր Պուլկարիոյ եւ Ռումանիոյ բոլոր հայ եկեղեցիները աչքէ անցնելու, Պուլկար քաղաքներն այցելելէ յետոյ կուգէր գալ Ռումանիա»:

«Յիշեալ նուիրակ վարդապետը Ռումանիոյ գտնուած միջոցին հետադրած է մայրաքաղաքի երկու քահանաներուն թէ այս չարթու, երեքշաբթի գիշեր կը հասնի: Քահանաները, անկասկած, բազմիւ հայերու հետ հիւսիսային կայարանը գացած են վարդապետը ընդունելու, բայց նա չէ հասած»:

«Երեքշաբթի գիշեր վարդապետը կը հեռագրէ թէ չորեքշաբթի կը հասնի. հայերը զարձեւալ կերթան կայարան գիշեր գլխաւորելու, բայց այս անգամ ալ վարդապետը չի գար: Հինգշաբթի առաւօտ քահանաներէն մին նամակ մը կը ստանայ վարդապետէն, որով իր չի հասնելու պատճառը կը յայտնէր, իմացնելով թէ հինգշաբթի երեկոյ, հեռագրելէն յետոյ, երբ Ռումանիոյ ձրձօվա կանցնի, անգոյն կառավարիչ կը հասկնայ իր ու վրինն և կարգիլ Պուրէշի կառուղին նստիլ ու զինք ռադիկալական հակոդութեան տակ կը պահէ, խոտանալով որ չորեքշաբթի օր թոյլ տայ իրեն Պուրէշ երթալու: Նամակին մէջ այդքան զրուած էր:

«Քահանաները տեսնելով որ վարդապետը չի գար, այլ ևս կը հետաքրքրուին պատճառը գիտնալու և կիմանան հետեւեալը»:

«Վարդապետը ձրձօվա մէջ արգիւտելէն յետոյ, տեղոյն քաղաքապետն Պ. Սթուրգաին (նախարարապետ) կը տեղեկագրէ վարդապետի պաշտօնի մասին: Պ. Սթուրգա հեռագրով կը պատասխանէ որ արգիլէ անոր մուտքը երկրին մէջ և անմիջապէս զանի ձրձօվաէն զուրս հանէ և միեւնոյն ատեն սահմանազրկի ամեն անցքերը չրջաբերական մը կը խրկէ պատուիրող որ այդ վարդապետին մուտքը չի թոյլատրուի:

«Կառավարիչը հետագիւրը ստանալով վարդապետն արտաքսած է, նոյն իսկ չի թոյլատրելով իրեն որ նամակ գրէ Պուրէշի:

«Հարկաւոր եղած ամեն պաշտօնական ձեւակերպութիւնները կատարած, կրօնական պաշտօն ունեցող մի վարդապետի դէմ Պ. Սթուրգաի բռնած այս անարայատրելի ընթացքը զարմանք պատճառած է այս խնդրոյ մասին ա-

մեն տեղեկութիւն ունեցողներու: «Սուք կայ թէ այս տեղի հայերն Ն. Մեծութեան թագաւորին պիտի գանգատին Պ. Սթուրգաին դէմ, որ արգելք կը հանդիսանայ իրենց կրօնի պաշտօնավարութեան, որ մեր երկրի մէջ ազատ է: «Արդէն յայտնի է այս նախարարապետին հայոց դէմ ունեցած ատելութիւնը: Ընթերցողներն կը յիշեն թէ մօտիկ անցեալի մէջ, նա մեր երկրի հիւրասիրութեան ապաւինող թշուառ հայերն դահիճ թուրքերու ձեռքը յանձնեց:»

ՌՈՒՄԱՆԱԿԱՆ ՀԱՅԵՐԸ

Իրաւունքի մարտ 11 թուականի թերթին մէջ հրատարակուած յօդուածիս մէկ կէտին դէմ մեծ պահքի չափ երկայն և Լուրճի ստորագրութիւնը կըրող պատասխան մը կարդացի դարձեալ այս սխալներուն մէջ:

Պ. յօդուածագիրը իր բոլոր երկարաբանութիւններովն կը ջանար անուանարկել Պուրէշի ձեռք խաչատուր քահանայ Մօսկոֆեանը, որոյ մասին ըսած էի թէ «միշտ ջանացած է իր կարողութեան ներած չափովը պառկանել իւր հօտին զբայցումները»:

Այս համեստ բացատրութիւնը Պ. Լուրճիի ակնալին այնչափ խորթ կը հնչէ, որ հայր Մօսկոֆեանի դէմ հին ատելութեամբ լեցուած հակառակորդի մը պէս կրկին հրապարակ կիջնէ, Արմենիաներու ծրարը ի ձեռնին և իր ըսածներուն իբր վաւերացումը մատնանիլ կընէ վաղօրօք գրած իր յօդուածները: Պ. Լուրճի փոխանակ մեր ըսածը ջրելու իր տաղտուկ պատճառելու չափ երկար յօդուածովը ըստ ամենայնի կը հաստատէ մեր ըսածը թէ իրօք հայր Մօսկոֆեան շատ մը քահանաներու նման, միայն խռնիկ ծըխող ու մեռել թաղող մը չըլլալով, միշտ ջանացած է իր կարողութեան ներած չափովը աշխատիլ, գրքեր հրատարակելով, թարգմանութիւններ ընելով, և որ գլխաւորն է, հայ եկեղեցւոյ վարկը բարձրացնելով ամբողջ Ռումանիոյ և անոր Սինդիկատի առջեւ, ինչ որ Պ. Լուրճիին խորամանկութեամբ բնաւ յիշիլ չուզեր, որովհետեւ եթէ այդ պարագան ալ յայտնէր, հակառակ իր ջանքին՝ հայր Մօսկոֆեան ամեն հայէ պիտի ծափաւարուէր:

Ահա թէ ի՞նչ է այդ պարագան: 1890 թուականին հայր Մօսկոֆեանի ձեռքն կը հասնի ռումաներէն կըրօնական դասագիրք մը, որ 15 տարիէ ի վեր բոլոր վարժարանաց մէջ կը դասախօսուէր և որ հայ եկեղեցւոյ ծէսերուն և դաւանութեանցը դէմ սոսկալի զրպարտութիւններ և անուանարկութիւններ կը պարունակէր. հայր Մօսկոֆեան չայստատանայ և կեղեցւոյ պատուոյն նախանձախնդրութեամբ, անմիջապէս կը գիւլէ Ռումէն Ս. Սինդիկատի նախագահին ու կը բողոքէ այդ անիրաւ զրպարտութեանց դէմ և գիրքին հեղինակին հետ կը պահանջէ դատուիլ Սինդիկատի առջեւ:

Բողոքը կընդունուի: Յատենի Սինդիկատ և ի ներկայութեան հարիւրաւոր ռումէն կրօնաւորաց, միայնակ կը ներկայանայ Մօսկոֆեանը իր դէմ ունենալով գիրքի հեղինակին, որ Պուրէշի համալսարանի մէջ բոսֆէնօս, ռումէն քահանայ մ'է: Ռումէն եկեղեցւոյ իր ներկայաւոր ներկայացուցիչներով, իսկ հայ եկեղեցւոյ միայն յանձին հայր Մօսկոֆեանի ճակատ առ ճակատ եկած են հոն, Ռումանական ոստայնին մէջ: Հայր Մօսկոֆեան կը վիճի, կը փաստէ և երեւան կը բերէ

հայ եկեղեցւոյ ուղղափառութիւնը: Դատաւարութիւնը 3-4 օր տեւելէ վերջ, Սինոդը կը վճռէ թէ Գօլիմէս-քօթէ՝ այս է հեղինակ քահանային անունը: զբաժնեւն անհիմն են եւ գիրքը բարեփոխութեան կարօտ: Հայր Մօսկոֆեան սոյն վճիռը անհիմն պէս, կը փութայ կրթական նախարարութեան եւ կը պահանջէ որ այդ գրաստ-գիրքը ուսման վարժարաններէն վերցուի: Նախարարն վճռագիրն տեսնալով անմիջապէս բոլոր վարժարաններէ ժողովել կուտայ այդ գիրքը: Հայր Մօսկոֆեան ժամանակ մ'ալ կըստիպուի լրագիրներու միջոցաւ իւր հակառակորդին դէմ մաքաթիլ միայնակ եւ միշտ միայնակ:

ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԱԳՐԵԱԼԸ

(Շարունակելի)

ԼՐԱՔԱՂ

Բարիզէն կը գրեն մեզ թէ զօրադարձար նուար բաշայի մահը մօտալուտ եւ անխուսափելի կը համարուի, բժիշկներուն յայտարարութեան համաձայն:

Բարիզի Հայոց բարեգործական ընկերութիւնը ցաւակցական հեռագիր մը ուղղած է Տիկին Կլաւտիմօնի, անոր մեծանուն ամուսինին մահուն անտիժով:

Շէքսպիրի «Արքայ Լիր» ողբերգութեան թարգմանութիւնը, զոր ըրած է Յովհ. Պան Մասէհեան, հրատարակուեցաւ Թիֆլիսի մէջ, Հայոց Հրատարակ. Ընկերութեան ձեռքով:

Գերմանացի հայապէտ բուֆէստ Պուրքհարտ համակրական յօդուած մը հրատարակած է Պիզ. Ձայրունի հանդէսին մէջ, էջմիածնի Արարատ ամսագրի մասին: Յօդուածը կը վերջանայ նմանապէս համակրական խօսքերով մեր ազգին համար, որուն բազմաթիւ օրեր կը մաղթէ քրիմանայի գիտունը:

Աղեքսանդրիայէն Մշակի գրուած թղթակցութեան մը մէջ կը կարդանք.

«Աթէնքէն պզտիկ լուր մը: Հեղին հայ տէրտէրը անյայտացի է, ինչ որ մեծ կսկիծ չի պատճառէր Յունաստանի գաղթական Հայերուն. բայց իրեն հետ անյայտացեցեր է եւ մատան արդ ուղարկելը, որոնք նգիպտուէն զրկուած էին երեմն. խաչ, աւետարան, սկիւն, շուրջառ, վերջապէս ինչ որ պէտք է պատարագելու եւ ժողովուրդը «հոգեւորապէս միաթարեւ»: Քահանան տեսնելով որ ժողովուրդը զինք չի միաթարեւ—ժամոցով, խելք բանեցուցեր է եւ ինքզինքը ինք միաթարած է:»

Կ. Պօլսոյ քաղաք. ժողովը որոշեւ է խառն ժողովի նկատառութեան յանձնարարել Պոլսի արքեպիսկոպոսի հոգով մը կարգելու պէտքը: Կերեւի թէ մեր հոգեւոր բարձրագոյն իշխանութիւնները տեղեկութիւն չունին իրարու գործերէն, այնպէս որ Կաթող. սյցելու հովիւը Պուլկարիայէ չմեկնած պիտի գայ մեզ այցելել նաեւ Պատրիարքարանէ նշանակուած հովիւ մը:

Կեղք. Ուսումնական խորհուրդին որոշմամբ ասկէ ետքը ազգային վարժարաններու հարցաքննութիւնները չի պիտի կատարուին տարեկան արձակուրդէն անմիջապէս առաջ, ինչպէս սովորութիւն էր ցարդ, այլ դաստիարակութիւնները պիտի շարունակուին մինչեւ արձակուրդին նախընթաց օրը. իսկ քննութիւնները պիտի կատարուին կազմական կանոնագրի որոշած մասնաւոր եղանակով:

Պատրիարքարանի եւ Իզմիրի գաւառ. ընդհ. ժողովին միջեւ անհամաձայնութիւն մը ծագած է: Պատրիար-

քարանը կուզէ եպիսկոպոսացնել տեղին առաջնորդ Ներսէս Դ. վարդապետ Աւանեսեանը, եւ կը պահանջէ: Իզմիր-ցիներէն անբասիր վարքի վկայական մը առ իրենց առաջնորդին: Ընդհանուր ժողովը գումարուելով կորոշէ չտալ այնպիսի անվարձական եւ վարդապետը հրաժարեցնել իր պաշտօնէն, որուն մէջ միշտ պարտազանց գտնուած է ամէն կերպով: Շատ օրինակներ որոշուած:

Պարթեթիւրի առաջն. տեղապահ Վահան վարդապետ Յակոբեան՝ երկրաշարժէ արկածեալներու ի նպաստ կատարուած հանգանակութեան մէջ զեղծումներ գործել է, որոնց զէմ տեղին քաղաք. ժողովը բողոքել է Պատրիարքարանին: Շենոհունակ հոգեւորականը թիւր վերջերս շատնայու վրայ է մեր մէջ:

Ս. Պատրիարքի որոշմամբ Վանի Սալապատայ Ս. Գրիգոր վաճ. թին մէջ ազգայիններու համար եւ նարեկայ վանքին մէջ մանչերու համար մէյմէկ որբանոց պիտի բացուի:

Ֆրէզնօյի ազգայինները որոշեւ են 14 որբ պահել իրենց ծախքով եւ իրենց այս որոշումը ծանուցել են Ս. Պատրիարքին:

Ամուսնական խնդիր մը առթիւ Պօլսոյ կրօն. ժողովը որոշեւ է Կաթողիկոսին ուշադրութեան յանձնարարել թէ ամուսնալուծութիւն եւ վերջապէս ամուսնալուծ հրաման խզրողներու թիւը օրէ օր կաւելնայ, մանաւանդ գաւառներու մէջ, եւ խնդրել միանգամայն Ն. Օծուկենէ որ կարգադրութիւն մը ըլլայ այս հոսանքին առջին անգամը համար: Հայրապետին խելք սորիցնելու ելլող եպիսկոպոսները, կիրիւի, հասկցնել կուզեն անոր ինք պատճառ եղած է այս հոսանքին, վերջերս ամուսնալուծման հրաման տալով կարգ մը ազգայիններու: Սովորական երեւոյթ մը չէ տեսնել Մերուսաղարդ Կաթողիկոս մը նուազ պահանջական եւ աւելի ազատախոհ քան մեր նուազ տարիքոտ եւ երիտասարդ եպիսկոպոսներն ու վարդապետները:

Սարէ Պլանք անուն ուսման հրապարակ հրէայ ազգիկ մը Ս. Պատրիարքին գիրք է հայկ. եկեղեցիի ծոցը ընդունուելու համար:

Իզմիրի յոյն քահանայապետը մը, սքանչացող Տիգրան Չուհանեանի տաղանդին, հանգուցեալ արուեստագէտին կիսարձանը պիտի շինէ, զայն հայ ազգին նուիրելու համար:

ՏԵՂԱԿԱՆ

Ձեռնհաս մայմոյ որոշումով պաշտօնավարելէ դադարած Տ. Կէորդ քահանայ Հիւրմիւղեանի՝ իր նախկին պաշտօնին մէջ վերահաստատութիւնը խնդրող հանրագիր մը տրուած ըլլալով քաղաքի թաղ. խորհուրդին, այս վերջինը իր որոշումին պատճառները հանրագիրը ստորագրող ազգայիններուն րացատրելու նպատակով, հիւսիսում էր անոնց մէկ մասը, անցեալ կիրակի ներկայ գտնուել թաղ. խորհրդարանը:

Այս գումարումի մէջ, որուն մասնակցեցան բոլոր հրաւիրեալները, խորհուրդին գիտանէն տրուած մանրամասն բացատրութիւնները այնքան զոհուցողիչ եւ քահանային հրաժարեցումն շարժութիւնները այնքան օրինաւոր դատուեցան որ ներկայ ազգայինները յայտարարեցին թէ համաժողովին խորհուրդին որոշումին, զոր ստանձնողապետի գտած էին, իրենց տրուած սխալ եւ խեղաթիւրեալ տեղեկութիւններուն հետեւանքով:

Մեծ գոհութեամբ կարճապարհներ այս միջադէպը, որուն ելքը հազուադէպ երեւոյթ մը կընծայէ մեզ մեր հանրային կեանքին մէջ, թէ՛ թաղ. խորհուրդին եւ թէ՛ մանաւանդ հանրապետութիւնը ստորագրող ազգայիններուն օրինաւոր եւ անկողմնակալ ոգին ու ուղղամտութիւնը երեւան բերելով: Այսօրինակ միջադէպերու մէջ հին սովորութիւն մըն է որ, սխալ ըմբռնուած ինքնասիրութեան մը հետեւանքով, իրաքանչիւր կողմը պարտք կը համարի անպայման զնդիլ իր ըսածին վրայ:

Կիրակի առաւրիւ գումարումին մասնակցողները ցուց տուին թէ իրենք աւելի լայն հայեացքներ ունին եւ իրապէս հանրային օգուտին նախանձախնդրութիւնը միայն եղած է իրենց առաջնորդ այս պարագային մէջ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Լրագրական վեճի մը հետեւանքով մենամարտ մը տեղի ունեցաւ Հանրի Ռօշֆօնի եւ նախկին ընկերավարական երեսփոխան Ժէրօ Ռիշարի միջեւ: Ռօշֆօն վերաւորուեցաւ թեթեւ կերպով:

Բրուսիոյ Հայերի իշխանը Բէթինէ մեկնեցաւ Բօսթ-Արթիւր երթուլու համար:

Իտալիոյ դահլիճին անգամնեւուն մէջ խորհրդարանական առաջիկայ աշխատութեանց մասին անհամաձայնութիւն ծագած ըլլալ, դահլիճը տուաւ իր հրաժարականը եւ թագաւորը Ռուսիոյ յանձնեց նոր նախարարութիւն մը կազմելու հոգը:

Անգլիոյ ֆրանսական Նիկէրեան բանակցութիւնները չափազանց կիրկարածգուին եւ գաղտնի կը պահուին, ինչ որ կասկածելի նշան մը կը նկատուի վերջնական համաձայնութեան մը գոյացումին մասին: Լօրտերու ժողովին մէջ, հարցումի մը իբր պատասխան, լօրտ Սօլպերի յայտարարեց թէ չկրնար բանակցութիւններու վրայ տեղեկութիւն տալ, ցորչափ անոնք աւարտած չեն: Նոյն յայտարարութիւնը ըրաւ Գրեզըն երեսփոխանական ժողովին մէջ:

Անգլիոյ թագուհին մայիս 12/24ին իր ութսուն տարեկան հասակին թեւակոխեց:

Կ. Պօլսոյ՝ Պօլսոյ Կոյմի քաղաքի վեր եւ ծովամոյն եղեր է ամբողջապէս: Նաւամատոյցին վերայի շէնքերը կը սպառնան փլուլ: Այս երրորդ փլուլումն է որ տեղի կունենայ: Քարտուի ընկերութիւնը մատակարարապէս 120,000 ոսկի ծախսած է փլուծ քարտուին համար:

Ինչպէս արդէն ծանուցինք, Ռուսիոյ մէջ կրն ըմբռնել իրաւունք ոտայան պետական ծաւալութեան մէջ մտնելու: Թուրքիոյ մէջ ալ, ատոր ընդունին հակառակ, կրնեւուն չափով թայլատրուի ըմբռնութեան տրհատող գործադրել: ասանկ որոշած է պետական խորհուրդը:

Բարիզի մէջ չընդ շրջիցի

մը համեմատ՝ Գերմանիա եւ Անգլիա գաղնակցութիւն մը պիտի կնքեն իրարու հետ:

Սա ստոյգ է որ, կրսէ ֆրանսական թերթ մը, մերձեցում մը տեղի ունեցած է երկու տէրութեանց միջեւ եւ թէ Անգլիա գաղնակից մը կը փնտռէ այս պահուն: —Քալքի կը հաստատէ այն զրոյցը թէ Սպանիա կը փափաքի ֆիլիպին կղզիները թողուլ Ֆրանսայի: Նոյն լրագիրը կրսէ թէ Բարիզի սպանիական դեսպանը եւ Հանօթօ բանակցութեան մէջ են այս խնդրոյ համար:

Անգլիական ծովակալութեան լօրտ պետը Ճիլպարլար քնաց տեղւոյն ամբողջութեամբ աչքէ անցնելու: Մեծ կարեւորութիւն կը տրուի այս լուրին:

Լիւպօնի մէջ շքեղ հանդէսներով տօնուեցաւ վաւաք տէ կամարի զիւարն 400րդ. տարեդարձը: Վասքօ տէ կամար, ինչպէս յայտնի է, ծովու ճամբով Հնդկաստան երթալու ուղին գտաւ, Բարեյուսոյ հրուանդանէն անցնելով:

Պալմիրի նաւարանին մէջ ի ներկայութեան Չարին, Չարուհին եւ մայր Չարուհին տեղի ունեցաւ առաջին կարգի յաճառ. լակ կոնսուլայի եւ փոխադրանաւ Ամուրի ողնափայտերուն զետեղման արարողութիւնը, եւ Բէթելիէք զրահաւորին ծով իջեցումը: Կրօնապօր պիտի ունենայ նաեւ ընդծովայ թօրբիւններու գործիքներ եւ 49 հանգոյց արագութիւն, 473 ոտք երկայնութիւն, 68 1/2 ոտք լայնութիւն ու 14357 թօնօ տարողութիւն:

Չէմպուէնի վերջին ճառը, որ կը յայտարարէր թէ կարելի չէ վստահիլ Ռուս կառավարութեան խօսքին, մեծ աղմուկ հանեց ամեն տեղ, բացի Ռուսիայէն որուն թէ կ'ստավարութիւնը եւ թէ մամուլը կարեւորութիւն չի տալ կը ձեւացնեն դէպքին: Ֆրանսական թերթներու ըսածին նայելով, որպէս թէ Ռուսիա նկատողութեան կառնէ եղեր սակետը թէ Չէմպուէն Անգլիոյ արտաքին քաղաքականութիւնը ներկայայնելու հանգամանք չունի. . .

ԲԷՆՍ ՎԷ ԲԷՆՍՆՍ ՀԱՅԱՐԱԹԸ

ՍՅԱՄՊՈԼՏՍ

Սուլթանը արգելաւ մուսկալիներէն Բէնս Գէրմանիա վէ Բէնսէս հաղարթը Աթինատան Սթանպուլ ազիմէթ վէ մայիս 13-է թիւրքիա բայթաթընա վասըլ օրմուշար տըր:

Բէնս վէ Բէնսէս հաղարթը մեւ չի Ծաքի բաշա վէ եսվէր Մէհմէտ Ալի բաշա իւէ պէրուպէր սէրայ արապալար իւէ Երազ Գէօզկէ ազիմէթ խուպ Սուլթան հուզուրնա չըգմըշար տըր:

Պիւր թէլէկրաֆա հաղարէն՝ Սուլթան Մաքեթիա սօն վեդուաթը էսնա սընտա Պուլկարիանըն սիւլիւք թիւրքի թարգման տօլայը Բէնս հաղարթէրէն թէլէքթիւրի պէնա իթմիշ տիւր:

Բէնս հաղարթէրի Սթանպուլ սէ-

Ֆարէթը խանէր ինչէն քան թէ տը վիզի թ
պրազմը վէ ուս սէֆիրի Մ. Զինո-
վիէֆէ վէ տիկէր սէֆարէթ մէմուր-
լորէնա միւլթէլիֆ նիշանլար ինսան
էյլէմիշ տիր:

Միւլթէլիֆի հազարաթը Սուլ-
թան թարաֆընտան ֆէվզէլաւէ գա-
պուլ վէ բիայէթ կէօրմիւլէր վէ իքի
կիւն Նըլտըզտա միւսաֆիր գալտըգ-
տան սօնրա Սթանպօլտան ավտէթ վէ
մայիս 16-ա Սօֆիայա միւլթէլիֆ
իթմիշ տիր:

ԿԼԱՏՍԹՈՆ

Միւլթէլիֆի կլատսթօնըն ճէնադէ
ալալը Լօնտրոտա բէք մութանթան
սուրէթտէ ինրա ուլունըն ալը: Վէ-
լիտան բրէնա տը կալ տիր վէ տիր-
չէս տը թէք վէ սայիր բրէնսէր, վիւ-
քէլա, թէքմիլ բաղլամէնթօ աղալարը
վէ խընճախընճ էնալի ալալտա հազըր
պուլընմըլար տիր:

ՄԻԻԹԵՆԵՎ ՎԻԷ

Թիւրք ասքէրլէրին նազլի իշիւն
եէնիտէն վօլոյա վարօրլար կէօն-
տէրլէնէք տիր:

— Բէթէրսպուրկ սէֆիրի սըր
Օ'Գօննօրըն Սթանպօլ սէֆիրի
թալին օլունմասընա Սալթանըն
հիւանիւ բիզասընը թահսիլ իթ-
մէք իշիւն Լօրտ Սօլլպէրի ատէ-
թը գատիմէ իւզրէ Պապը Ալիյէ
լաղըմ կէլէն միւրաճաթը իթմիշ
տիր: Սէֆիրի սապըք Սըր Գըր-
րի Սթամպօլտան միւլթարէգաթ
իթմիշ տիր:

— Քէօլնիշէ Գայրուկըն պիւ-
տիրտիկինէ նազարէն՝ Պապը Ալի
Ռուսիա հիւքիւմէթինէ էօտէնէ-
ճէք թաղմիւնթը հարպիյէյի պէշ
սէնէտէ սէնէվի 300,000 լիւրալը
թաղսիւթէ թէսվիյէ իթմէք ար-
զուսընտա օլտուղըն ուս սէ-
ֆիրինէ պիւտիրմիշ տիր:

— Բօլթօ Լալօս ֆրանսըղ գօն-
սօլաթօ աճէնթի վուգուլթընը
թահգիգ վէ թէճէսսիւս իթմէք
իւզրէ, Սթամպօլ սէֆարէթ թէր-
ճէմանլարընտան պիրիսի մահալը
մէզքիւրէ կէօնտէրլիմիշ տիր: Թէր-
ճիմանըն ավտէթինտէն սօնրա,
սէֆիր Մ. Կամպօն լաղըմ կէլէն
թարալիյէնին ինրասընը Պապը Ա-
լիտէն թալէպ իտէճէք իսէ տէ,
Պապը Ալի իշին իլէրիսինի կէօր-
տիւկինտէն, գօնսօլաթօ աճէնթի
Մ. Պուլկարիտէսէն եէնիտէն մէ-
մուրիթի պաշընա կէլմէսի իշիւն
քէնտիսինէ բէսմէն բէճա օլընմա-
սը վէ զապթ օլընան գօնսօլա-
թօ էշեասընըն իտտէ իտիւմէսի
զըմընտա լաղըմ կէլէն մահալէ-
րէ շիմտիտէն էմր վէրմիշ վէ Բը-
սանթի միւլթէսարըրթընը տալի
մէմուրիյէթինտէն ալ իթմիշ տիր:

— Պէրլինտէ պուլընան Եունան
վէլիթահալը բրէնա Գօնսթանթին
վէ բրէնսէս Սօֆիա շէրէֆինէ իմ-
բէրաթօրըն էմր իլէ պիր բէսմի
կէլիտ ինրա օլունմըլ վէ սարալ-
տա միւլթէմէլ պիր զիյաֆէթ վէ-
րիմիշ տիր:

— Թիւրքիա վէ Սերպիա պէյ-

նինտէ իմզալանտադ թիւարէթ
աճտնամէսի մուլթալէրաթը մու-
վազգալթ սուրէթտէ գաթ օլուն-
մըլ տըր: Սերպիա թարաֆընտան
թալին օլընան մէմուրլար եէնի-
թալիմաթա պէքլէմէքտէ տիրլէր:

— Թիւրքիա իլէ Եունանիսթան
չէլնինտէ գօնսօլաթօ մէզընիյէթ
լէրինէ տալիւր ազտ օլընամադ
խուսուսի աճտնամէ հազըրտա
մուլթալէրաթա տէվալ օլունմադ-
տա տըր:

— Թիւրք ասքէրլէրին թէսա-
լիտան նազլի մայիս սօնընա գա-
տար խիթամ պուլաճադ տըր:

— Էտիրնէ եահուտի միլիթի
գարը, էրբէք վէ չօճօղլարընըն
թիւսալիտան ավտէթ իտէն
թիւրք ասքէրլէրին գարըլալըպ
թէպրիք իթտիքլէրին Սթանպօլ
կաղէթալարը պիւտիրիյօրլար:

— Թէսալիտան թիւրքիայա
հիճրէթ իթմէկէ արզու իտէն
թիւրքլէրին վէ եահուտիլէրին
էօլ մասաֆընը թիւրք հիւքիւ-
մէթի թարաֆընտան վէրլէնէ-
կինտէն, պու պապտէ Լտհէմ
բաշայա թալիմաթ կէօնտէրլիմիշ
տիր:

— Մօնիթէօն վէ Թահուրօնսոն նամ
կաղէթալարըն մուհարիլէրինէ
խիթապ եաղըմըլ պիր գաշթէ-
տիտամիզ մէքթուսլար Սթամպօլ
բօլիցիտսընէլին տիւլմիւլ օլտըղըն-
տան, միւլթէճասըրլար արանմադ-
տա տըրլար:

Մ ՈՒ Հ Ա Ր Է Պ Է

Բիւվայէթէ նազարէն՝ ամիրալ
Սէրվարօ Սէնթիակօ լիմանընտա
պուլընմադտա օլուպ, Ամէրիգա սէ-
ֆինէլէրի կէլիպ օլտաղը թուլթմըլ-
լար տըր: Գատիքստէ պուլունան
Սպանիա սէֆինէլէրի իսէ, Սէր-
վարօյա եարտըմա եէթիւմէք ի-
շիւն Սէնթիակօյա կէլիպ Ամէրիգա-
լըլար իւզրէնէ հիւճու իտէճէք-
լէր իմիշ: Պու հալաթիս սահիհ
իսէ, Սէնթիակօ լիմանընտա պու-
լունան Սպանիա սէֆինէլէրի տա-
լի թապիլ տիկէր թարաֆտան
հիւճու իտէճէքլէրինտէն, Ամէրի-
գալըլար իքի աթէշ արասընտա
գալաճաղար տըր:

Հալպու քի Մատրիտտէ գու-
զուր իտէն պիր շայիայա կէօրէ,
Սէնթիակօտա պիր շէտիտ մու-
հարէպէ վուգու պուլունը, Ամէրի-
գալըլար մաղուպ օլունը վէ ամի-
րալ Սամբսօն վուրուլմըլ տըր:
Պուլըն զըտտը օլարապ, Սպանի-
ալըլարըն մաղուպ, սէֆինէլէրինին
քեամիլէն խարապ վէ Սէնթիակ-
օնըն թօքա թուլթուլմըլ օլտըգ-
լարը Ուաշինկթօնտա սէօյլէնմէք-
տէ տիր:

Գատիքստէն հարաքէթ իթմիշ
օլան ֆիլօնըն հանկը թարաֆա
կիթտիկի մալիւմ տէյիլ տիր:

Պէքլէնմէքտէ օլան մուհարէպէ-
տէն պաշգա, Ամէրիգալըլարըն
տըղգաթընը էն զիյատէ ճէլպ ի-

տէն նօգթա Ֆիլիբին ատալարընը
զապթ իթմէք մէսէլէսի տիր Գա-
վիթա գալիտսընտան սօնրա, Ա-
մէրիգալըլար եալընըլ մէլքիւր
ուֆադ շէհրի զապթ իտէպիլտի-
լէր վէ Մանիլայա կիրէպիլմէք ի-
շիւն տահա շիմտի նիղամ ասքէ-
րի վէ կէօնիւլիւ եօլլանըլմադտա
տըր: Պուլար քէօմիւր ալմադ ի-
շիւն Հալաթիս տուրմադա մէճ-
պուր օլուպ, անճադ 24 կիւնտէ
Ֆիլիբին ատալարընա եէթիւլէպի-
լէճէքլէր տիր:

Գուպա ատալարըն զապթ իտէ-
պիլմէք իշիւն տալի 85000 աս-
քէր իքթիկա իտէճէկի Ուաշինկ-
թօնտա թալիմին օլունըլար:

Մատրիտտէն կէլէն պիր թէլէ-
կրաֆ Գուպատա վէ Բօլթօ-Ռի-
քօտա իշէրին սըրասընտա կիթ-
աիկինէ տալի մէմուլ օլաճադ
հալաթիսլէր գուհուր իթմիշ իսէ
տէ, հիւքիւմէթ պու պապտէ ալ-
տըղը հալաթիսլէրին նէտէն ի-
պարէթ օլտըղըն շիմտիքի հալ-
կիլի սաղլամադտա տըր:

Մանիլատա էհալի պէյնինտէ
գարըլըլըլ գուհուր իտէճէկին-
տէն գօրգալտըլը սէպէպլէ, օրա-
տա միւլթէմէքթին տլման վէ ին-
կիլիլ էհալիսի Գալիթայա շէ-
քիլմէքտէ տիր: Քէլա Գարօլին
ատալարընտա էհալինին Սպանիա
հիւքիւմէթինէ գարըլըլ գըլամ իթ-
տիկինի Ամէրիգա կաղէթալարը
պիւտիրիյօրլար:

Միւլթէմէքտի Ամէրիգա Մէ-
պուսան վէ Այան մէճիլէրի գա-
լարը մուհիպինէ, ճուհուրիյէթ
բէյիսի 75000 կէօնիւլիւ տահա
եաղըլմասընը էմր իթմիշ տիր:
Պուլար իլէ պէրապէր շիմտիյէ
գատար սիւհալ ալթընտա պուլը-
նան նիղամ ասքէրի վէ կէօնիւլ-
իւլէր 280,000է պալիլ օլաճադ-
լար:

ԻՆՆԵՐ ՐԷՍՄԻ

Վարնա վէ ճիվար քէօլէրտէ
իրան տէվէթի թէպաասընտան
պուլընան բաղպէթուլ զէվաթա
պիւտիրիլէր քի իշպու մայիս ա-
լընտա, բաղար կիւնէրի էօյլէն-
տէն սօնրա սաաթ 1 տէն 5է գա-
տար, քէնտիլէրի շախսէն վէ եա-
խօտ օլաճադըլը հալտէ, վէքեա-
լէթէն գօնսօլաթանէյէ թէշրիֆ
իտուպ, էլլէրինտէ պուլընան էվ-
րաղլարը թաստիգ վէ իսիմլէրինի
քիւլթիւկ տէֆթիլէրինէ գայտ իթ-
տիրմէլի տիրլէր:

Վիւ-գօնիւիլա տըր Բէրս
Վառնա, Գ. Ուշալար, Ուշիցա
Տէպրաքա Նօ 66

Ա. Զ. Գ.

Խրաշուք կը ծախուի Սաճուն
սըճարանի ծխալաճառ Պ. Վահան
Անտօնեանի, Մուսալլագուրու գահ-
վէճի Պ. Յակոբ կէօղիւպէօյիւք-
եանի և Ապտիւրրահման միլիթին
գէմ Հայկական Գրատան մէջ
ի վաճառ:

ԶԱՄԻՐԻ ԲԻԱՅԱՍԸ

Վառնա 19 Մայիս
Պաշտոն
Վալօն, լիպրա 47-51, հէքթօլ.
10-10.50 ֆրանք
Արապա, լիպրա 47-55 հէքթօլ.
8.-10 ֆրանք
Արապ
Լիպրա 38-41, հէքթօլ. 6.20-6.40
ֆրանք

Յասուշեա
100 օգգասը 16-20 ֆրանք՝ մալա
կէօրէ
Արապա մուսմէլէսի՝ Նարօլէն
21 ֆո. հիստալը իլէ տիր.
Կիւնտէ 2-3 վալօն 15-20 ա-
րապա պուլտայ վէ 3-4 արապա
արապ կէլմէքտէ տիր:

Ա. Զ. Գ.

Խրաշուք կը ծախուի Ռուս.
ճուգ, բօստայի նախկին շէնքի
գիմաք, Տիար Մ. Թիւթիւնճեա.
նի խանութը:

Տէկիլմէն թաշը տիշլէմէք ի-
շիւն մախսուս սէնաաթ էհիսիա-
րայանլար աթիտէքի ատրէսէ միւ-
րաճաթ իթմէլի տիրլէր:
Թորոնտան վասըլթասըլա
Թուլմաս Մըղրապաճեան, Պուրբէշ
Գալէա—Բահօվա, 124.

Լոյս տեսաւ

ՐԱՅՅԻԻ

ՍԱՄՈՒԷԼ

Պառնակաւ վէպը

Ա. Բ. Գ. Գիրք

Հեղինակին վերջին պատկերով

Գինն է 7 շիլինգ

Իսկ «Դաւիթ-Բէկ» հատոր Ա.
Բ. և Գ. վերջաւանով և «Կայ-
ծեր» հատոր Բ. յաւիտաւար, լոյս
պիտի տեսնեն ներկայ տարուայ
ընթացքում, որոնց բաժանորդա-
գրութիւնը շարունակում է. եր-
կու գրքի միասին բաժանորդա-
գինն է՝ 10 շիլինգ. իսկ լոյս տես-
նելուց յետոյ կարժենան 14 շիլինգ:
Յանկացողները թէ՛ Մամուլի
և թէ՛ Բաժնի միւս երկերի հա-
մար, կարող են դիմել այս հասցէին

Mme Raffi

270, Uxbridge Road.

Shepherd's Bush,
London W.

«ԱՐԵՎԵԼԵԱՆ ՃԱՇԱՐԱՆ»

Նսր քացուած

Ի Ռ Ս Ճ Ո Ւ Բ

Սիմիոնֆի դրամատուն գէմ
գտնուող նախկին «Մասիս»ի շէն-
քին մէջ, ուր կը պատրաստուին
տան խահանջի յատուկ մաքու-
թեամբ համադամ կերակուրներ
և անուշիկներ չափաւոր գինե-
րով: Փորձել ստուգել է:
Բաժանորդագրութիւն կ'ընդուն-
ուի գիւրամատչելի պայմաններով:

Ա. Զ. Գ.

Ով որ գիտէ թորոս Աղապ-
լարեան անուն 25 տարեկան, բնիկ
Երզնկացի երիտասարդին ուր գըտ-
նուլը, թող հաճի իմացնել իրա-
շունքի խմբագրութեան: